վաղն կու բանամ, և... հրէայն այն իբր չգիտելով անմռունչ կանգներ է անդ. և յորժամ օրն եղեւ հասարակ, դեռ ևս կը վիճին թէ բաց զդուռն, և ուխտաւորք զմոմերն ի ձեռին իւրեանց ունելով լաց եւ հառաչանք անելով, եկն ժամանակ լուսոյն. յանկարծակի որոտմունք իբրև ամպ գոռաց, և ձայնէն ամենեքեան զարհուրէին. և միւթէվէլլին նոյն խեղճ մոլորեալն և հրէայն ընդ նմա կու հայէին այս կոյս եւ այն կոյս. եւ որոտմունքն սաստկանար քան զչափն աւելի. և իսկոյն սիւնն այն պատառեալ և լուսն անտի ճառագայթեալ որ ուխտաւորք անտի լուսաւորուին. և միւթէվէլլին խախք կը լինայ հանդերձ հրէով։ Եւ յորժամ այսպէս կը տեսանին ակներև հանեալ զսուրն և թափին վերան, զհրէայն կտոր կտոր կ'անին։ Այն տարին այսպէս հրաշք է եղեր. յետ նորա դրանն առջեւ խոշոր գամեր զարկած ի գետնի, թէ այն օրն ով ոք կարողութիւն ունի մէկ կամ երկու աղքատ ներս առնէ. վերջն ինացածն թագաւորին և միւթէվէլլուն գլխուն սատաղա ներս լնա, եթէ ոք յանդգնի կամ պատճառ լինա՝ այն գամերն իւրեան աչիցն մէջն մխի. և յետոյ պայման եղեալ քաղաքացիք, թէ դատաւորք այս երկու դրան արալըին հրէայ տեսնէք՝ իսկոյն սպանէք զնա առանց յապաղելոյ, և կայ այս պայման մինչև ցայսօր. և որ այն տեղեացն հրէայ չի կրնար անցնիր։ Ու այս է ստոյգ պատճառն, եղբայր, և Քրիստոսի փառք» (Բազ. 1868, էջ 114)։

6. Ս. Յովհաննու մատուռն Հայոց, Ս. Յարութեան բակին մէջ. — Ս. Յարութեան Տաճարի գաւիթին արևելեան կողմը կը գտնուի Հայոց սեպհական Ս. Յովհաննու Աւետարանչի մատուռը երեք սեղանով։ Ա-